ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N: ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-25/2-1

ք. Երևան «29» հունվարի 2025 թ.

ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Աբգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳԱԲՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Գաբրիելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ստորին Հրազդանի ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2025 թ. ապրիլի 1-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանն այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար. ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել

աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 29887920 (քսանինը միլիոն ութ հարյուր ութսունյոթ հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ, որից 4981320 (չորս միլիոն ինը հարյուր ութսունմեկ հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է՝ 29887920 (քսանինը միլիոն ութ հարյուր ութսունյոթ հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է՝ 37124500 (երեսունյոթ միլիոն հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարել	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
3	Սանիտարահիգենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
4	Համապատասխան շինարարական համազգեստի բացակայություն	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
5	Համաձայն Քաղաքաշինության կոմիտեի կողմից սահմանված նորմերի տեսաձայնագրման սարքերի բացակայություն	Տուգանք – պայմանագրային գնի 10% չափով Երկրորդ անգամ կրկնելու դեպքում՝ պայմանագրի խզում

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ՏԿԵՆ «Զրաո» ՓԲԸ	«ԳԱԲՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8	ք. Երևան, Զրվեժ բանավան 12 շ. 12
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ	«Արդշինբանկ» ՓԲԸ
h/h 2479000059160000	հհ 2472404097110000
ՀՎՀՀ 00093621	ՀՎՀՀ 01055212
Տնօրեն	Տնօրեն
---------- Ա. ԱԲԳԱՐՅԱՆ	---------- Հ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 29 » հունվարի 2025 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-25/2-1 պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՍՏՈՐԻՆ ՀՐԱԶԴԱՆԻ ՋՐԱՆՑՔԻ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ծավալաթերթ-նախահաշիվ

Հ/հ	Գնացու-ցակների NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուր արժեքը միավորի համար	Ընդհանուր արժեքը
ՆԿ 0+00 - ՆԿ 122+80 Ստորին Հրազդան ջրանցք I հերթ						
Ջրանցքի մաքրման աշխատանքներ						
1	1-58	Ջրանցքի մաքրում բերվածքներից և կենցաղային աղբից մեխանիզմով	մ³	750,0	0,9436	707,7
2	1-962	Ջրանցքի մաքրում բերվածքներից և կենցաղային աղբից ձեռքով ՊԿ 0+00- ՊԿ 9+50	մ³	450,0	6,2205	2 799,2
4	1-1085	Ջրանցքի երկայնքով մաքրում բուսականությունից և թփուտներից	հա	0,20	35,2657	7,05
5	23-228 Գն3	Կենցաղային աղբի և բերվածքների բարձում և տեղափոխելով 25կմ թափոնակույտ	մ³	270,0	6,2521	1 688,1
6	23-228 Գն3	Կենցաղային աղբի և բերվածքների բարձում և տեղափոխելով 15կմ թափոնակույտ	մ³	460,0	4,6307	2 130,1
7	23-228 Գն3	Կենցաղային աղբի և բերվածքների բարձում և տեղափոխելով 10կմ թափոնակույտ	մ³	470,0	3,6173	1 700,1
Ջրանցքի նորոգման աշխատանքներ						
1	46-80 23-231 Գն 3	Քայքայված բետոնի քանդում բարձում ևտեղափոխում 10կմ թափոնավայր	մ³	8,0	20,8429	166,74
2	46-53 q=2	Բետոնե մակերևույթի մաքրում օդով	մ²	50,0	0,7729	38,65
3	37-705	Խոռոչի փակում միաձույլ բետոն B15, F150, W4	մ³	12,0	79,1112	949,33
Ջրաչափական դիտակետերի մաքրման և նորոգման աշխատանքներ						
1	1-962 23-228 Գն3	Դիտակետերի մաքրում բերվածքներից ձեռքով, բարձում և տեղափոխելով 10 կմ թափոնակույտ	մ³	15,0	12,008	180,1
2	Շուկա	Ջրաչափական քանոնի տեղադրում L=1.0մ	հատ	2	14,890	29,78
3	Շուկա	Ջրաչափական քանոնի տեղադրում L=0,5մ	հատ	5	10,423	52,11
		Ընդամենը				10449,02
ՆԿ122+80 - ՆԿ 283+37 Ստորին Հրազդան ջրանցք I հերթ						
Ջրանցքի մաքրման աշխատանքներ						
1	1-58	Ջրանցքի մաքրում բերվածքներից և կենցաղային աղբից մեխանիզմով	մ³	200,0	0,944	188,7
2	1-962	Ջրանցքի մաքրում բերվածքներից և կենցաղային աղբից ձեռքով	մ³	90,0	6,220	559,8

3	1-990 23-230 Գն3	Ջրանցքի մաքրում խոշոր քարերից և պանելների կտորներից բարձելով տեղափոխելով 10կմ թափոնակույտ	մ³	5,0	26,545	132,7
4	1-1085	Ջրանցքի երկայնքով մաքրում բուսականությունից և թփուտներից	հա	0,20	35,266	7,05
5	23-228 Գն3	Կենցաղային աղբի և բերվածքների բարձում և տեղափոխելով 8կմ թափոնակույտ	մ³	290,0	3,212	931,5
Ջրանցքի նորոգման աշխատանքներ						
1	46-80 23-231 Գն 3	Քայքայված բետոնի քանդում բարձում նտեղափոխում 8կմ թափոնավայր	մ³	1,0	19,911	19,91
2	46-53 q=2	Բետոնե մակերևույթի մաքրում օդով	մ²	30,0	0,773	23,19
3	37-705	Խոռոչի փակում միաձույլ բետոն B15, F150, W4	մ³	10,00	79,111	791,11
4	37-705	Հատակի միաձույլ բետոնի իրականացում h=12 սմ, B15, F150, W4	մ³	20,00	79,111	1 582,22
Ջրաչափական դիտակետերի մաքրման և նորոգման աշխատանքներ						
1	1-962 23-228 Գն3	Դիտակետերի մաքրում բերվածքներից ձեռքով, բարձում և տեղափոխում 8 կմ թափոնավայր	մ³	15,0	11,360	170,4
2	Շուկա	Ջրաչափական քանոնի տեղադրում L=1.0մ	հատ	4	14,890	59,56
3	Շուկա	Ջրաչափական քանոնի տեղադրում L=0,5մ	հատ	5	10,423	52,11
4	22-120-1 q=1,5	Փականի վերանորոգում ՊԿ 156+00 (վերամբարձ հեղյուս Ø60մմ, L=1750մմ, 1 հատ, մանեկ Ø100x65, 1 հատ),	տ	0,010	2 188,071	21,9
5	22-120-1 q=1,5	Փականի վերանորոգում ՊԿ 177+00 (թիթեղ 500x840x4մմ, 1հատ)	տ	0,0132	1 275,995	16,8
6	22-120-1 q=1,5	Փականի վերանորոգում ՊԿ 188+00 (թիթեղ 500x700x4 անկյունակ 60x60x6)	տ	0,0390	1 042,687	40,7
7	շուկա	Ռետին փականի համար (ՊԿ156+00, ՊԿ188+00)	մ	9,2	1,489	13,7
8	22-386	Սեպավոր փականի տեղադրում DN 200 մմ (ՊԿ200+00, ՊԿ228+10, ՊԿ248+40)	հատ	3,0	189,890	569,7
9	22-120-1 q=1,5	Փականի վերանորոգում ՊԿ 208+40 (թիթեղ 300x610x5մմ, 1հատ)	տ	0,0072	1 294,348	9,3
10	22-120-1 q=1,5	Փականի վերանորոգում ՊԿ 271+80 (թիթեղ 750x1000x5մմ, 1հատ)	տ	0,0295	1 294,514	38,2
		Ընդամենը				5228,6
ՆԿ0+00 - ՆԿ 145+00 Ստորին Հրազդան ջրանցք II հերթ						
Ջրանցքի մաքրման աշխատանքներ						
1	1-58	Ջրանցքի մաքրում բերվածքներից և կենցաղային աղբից մեխանիզմով	մ³	400,0	0,944	377,4
2	1-962	Ջրանցքի մաքրում բերվածքներից և կենցաղային աղբից ձեռքով	մ³	100,0	6,220	622,0
3	1-990 23-230 Գն3	Ջրանցքի մաքրում խոշոր քարերից և պանելների կտորներից բարձելով տեղափոխելով 10կմ թափոնակույտ	մ³	5,0	26,545	132,7
4	1-1085	Ջրանցքի երկայնքով մաքրում բուսականությունից և թփուտներից	հա	1,50	35,266	52,90
5	23-228 Գն3	Կենցաղային աղբի և բերվածքների բարձում և տեղափոխելով 8կմ թափոնակույտ	մ³	150,0	3,212	481,8
6	23-228 Գն3	Կենցաղային աղբի և բերվածքների բարձում և տեղափոխելով 6կմ թափոնակույտ	մ³	350,0	2,807	982,3

Ջրանցքի նորոգման աշխատանքներ						
1	46-80 23-231 Գն 3	Քայքայված բետոնի քանդում բարձում նտեղափոխում 8կմ թափոնավայր	մ³	5,0	19,911	99,55
2	46-53 q=2	Բետոնե մակերևույթի մաքրում օդով	մ²	15,0	0,773	11,59
3	37-705	Խոռոչի փակում միաձույլ բետոն B15, F150, W4	մ³	10,0	79,111	791,11
Դյուկերի մաքրման աշխատանքներ						
1	1-962 23-246	Դյուկերի խցանված հատվածի մաքրում ձեռքով հատուկ արտահագուստով, բարձելով սալյակների վրա տեղափոխելով 100մ	մ³	300,0	8,962	2 688,59
2	23-228 Գն3	Կենցաղային աղբի և բերվածքների բարձում և տեղափոխելով 8կմ թափոնակույտ	մ³	300,0	3,212	963,59
Ջրաչափական դիտակետերի մաքրման և նորոգման աշխատանքներ						
1	1-962 23-228 Գն3	Դիտակետերի մաքրում բերվածքներից ձեռքով, բարձում և տեղափոխելով 10 կմ թափոնակույտ	մ³	15,0	12,008	180,1
4	22-120-1 q=1,5	Փականի վերանորոգում (թիթեղ 60x100x4)	տ	0,0377	701,958	26,5
5	22-386	Սեպավոր փականի տեղադրում DN 200 մմ (ՊԿ88+10, ՊԿ94+40, ՊԿ96+00)	հատ	3,0	189,890	569,7
6	Շուկա	Ջրաչափական քանոնի տեղադրում L=1.0մ	հատ	3	14,890	44,67
7	Շուկա	Ջրաչափական քանոնի տեղադրում L=0,5մ	հատ	5	10,423	52,11
		Ընդամենը				8076,69
ՆԿ 145+00 – ՆԿ 252+00 Ստորին Հրազդան ջրանցք II հերթ						
Ջրանցքի մաքրման աշխատանքներ						
1	1-58	Ջրանցքի մաքրում բերվածքներից և կենցաղային աղբից մեխանիզմով	մ³	300,0	0,944	283,1
2	1-962	Ջրանցքի մաքրում բերվածքներից և կենցաղային աղբից ձեռքով	մ³	100,0	6,220	622,0
3	1-990 23-230 Գն3	Ջրանցքի մաքրում խոշոր քարերից և պանելների կտորներից բարձելով տեղափոխելով 10կմ թափոնակույտ	մ³	5,0	26,545	132,7
4	1-1085	Ջրանցքի երկայնքով մաքրում բուսականությունից և թփուտներից	հա	1,50	35,266	52,90
5	23-228 Գն3	Կենցաղային աղբի և բերվածքների բարձում և տեղափոխելով 18կմ թափոնակույտ	մ³	250,0	5,239	1 309,7
6	23-228 Գն3	Կենցաղային աղբի և բերվածքների բարձում և տեղափոխելով 20կմ թափոնակույտ	մ³	150,0	5,644	846,6
Ջրանցքի նորոգման աշխատանքներ						
1	46-80 23-231 Գն 3	Քայքայված բետոնի քանդում բարձում և տեղափոխում 18կմ թափոնավայր	մ³	2,0	24,572	49,14
2	46-53 q=2	Բետոնե մակերևույթի մաքրում օդով	մ²	20,0	0,773	15,46
3	37-705	Խոռոչի փակում միաձույլ բետոն B15, F150, W4	մ³	10,00	79,111	791,11
Ջրաչափական դիտակետերի մաքրման և նորոգման աշխատանքներ						

1	1-962 23-228 Գն3	Դիտակետերի մաքրում բերվածքներից ձեռքով, բարձում և տեղափոխում 10 կմ թափոնավայր	մ³	10,0	12,008	120,1
2	22-120-1	Գոյություն ունեցող հարթ փականների ապամոնտաժում	տ	0,081	279,629	22,6
3	22-120-1	Հարթ փականների տեղադրում	տ	0,081	1 955,047	158,4
4	22-120-1 q=1,5	Փականի վերանորոգում (թիթեղ 60*100*4	տ	0,0188	704,859	13,3
		Ընդամենը				4417,1
Ծառայողական տնակի ներքին և արտաքին վերանորոգման աշխատանքներ						
1	11-225	Պատերի ներքին և արտաքին մակերեսի մաքրում քայքայված սվաղից 5 սմ հաստությամբ	մ²	31,8	1,251	39,77
2	11-157	Պատերի ներքին և արտաքին մակերեսների սվաղում ցեմ/ավազային սվաղով, ցանցով	մ²	31,80	4,766	151,55
3	15-535	Պատերի արտաքին մակերեսի ներկում ֆասադային ներկով	մ²	15,90	1,398	22,23
4	14-418	Պատերի ներքին մակերեսի ծեփամածկում և լատեքսային ներկում	մ²	15,00	1,578	23,66
5	23-16923-170	Հատակի մաքրում քայքայված հարթասվաղից 5 սմ հաստությամբ	մ²	13,0	0,992	12,90
6	5-85	Հատակի հարթեցնող շերտ 5 սմ հաստությամբ	մ²	13,0	2,720	35,36
7	5-130	Հատակի սալապատում կերամոգրանիտե սալիկներով	մ²	13,0	17,406	226,28
8	26-33	Ամրանավորում 4ВрI-100х100	տ	0,05	51,472	2,57
9	շուկա	Մետաղական արտաքին դուռ տեղադրումով	մ²	1,600	116,142	185,83
10	ինֆ.տեղ.	Մետաղապլաստե պատուհան մոծակա-շաշտպան ցանցով տեղադրումով (4 հատ)	մ²	2,300	35,984	82,76
11	շուկա	Պատուհանների մետաղական ճաղավանդակ ուղղանկյուն խողովակներից	մ²	2,300	16,379	37,67
12	34-316 34-352	Պլաստիկ կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքով	մ²	24,2	8,608	208,31
13	5-72	Սալվածքի իրականացում շենքի շուրջը 15սմ հաստ В15բետոնով	մ³	1,3	49,573	64,45
14	26-2	Բետոնի աստիճանների իրականացում 1,2х0,15х0,3 (5 հատ) В15բետոնով	մ³	0,3	65,113	19,53
Տանիք						
1	9-88	Տանիքի մետաղական կարկասի մոնտաժում	տ	0,275	791,339	217,62
2	33-763	Տանիքի մետաղական կարկասի ներկում	տ	0,275	75,752	20,83
3	8-265	Տանիքածածկի իրականացում ծալքավոր ցինկապատ պողպատե թերթ t=0.55 մմ КП-21-0,55մմ	մ²	24,2	7,924	191,77
4	8-277	Ջրհորդան գունավոր	գծմ	4,5	16,176	72,79
5	8-277	Ջրահեռացման խողովակ D=110մմ, 0.5 մմ ցինկապատ գունավոր թիթեղից 3m	կ-տ	1,0	32,654	32,65
Ներքին էլեկտրամատակարարում						
1	8-572-1	Վահանակ 50Ա միաֆազ մուտքային + 1х16Ա խմբային ավտոմատ անջատիչներով	լրակ	1,00	89,012	89,01

2	8-599-1	Լուսատու պատի էլ շիկացման թելիկով լամպով ցայտանթափանց, IP63 տարբերակով 220Վ, 100Վտ	լրակ	7,00	9,843	68,90
3	8-149-1	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 3x1,5մմ2 ВВГнг-LS	մ	60,00	0,497	29,84
4	8-418-5	Պոլիէթիլենե տուփախողովակ 40x20մմ	մ	10,000	0,623	6,2
5	8-591-10	Անջատիչ երկստեղանի, բաց լարման համար IP65 տարբերակի, 220Վ, 6Ա	հատ	1,00	3,191	3,19
6	8-591-8	Վարդակ հողանցումով, բաց լարման համար IP65 տարբերակի, 220Վ, 10Ա	հատ	4	2,756	11,02
7	Շուկա	Լուսատու շարժական 36Վ, 40Վտ	լրակ	1	7,445	7,44
8	Շուկա	Ճյուղավորման տուփ, բաց լարման համար IP63	հատ	2	0,223	0,45
		Ընդամենը				1864,628
		Ընդամենը				30036,01
		Չնախատեսված աշխատանքներ և ծախսեր 3%				901,08
		Ընդամենը				30937,09
		ԱԱՀ - 20%				6187,42
		Ընդամենը				37124,51

Կապալառու կազմակերպությունը պետք է ունենա շինարարության իրականացման առնվազն 2-րդ դասի լիցենզիա՝ «Հիդրոտեխնիկական կառույցներ (հիդրոտեխնիկական համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ)» ներդիրով: Աշխատանքների իրականացման մեջ պետք է ներգրավված լինի որակավորված ինժեներ-հիդրոտեխնիկ:

Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևանի և Արմավիրի մարզի Ստորին Հրազդանի ջրանք տարածքներում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
հ/հ 2479000059160000
ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

---------- Ա. ԱԲԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԳԱԲՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Ջրվեժ բանավան 12 շ. 12
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2472404097110000
ՀՎՀՀ 01055212
Տնօրեն

---------- Հ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 29 » հունվարի 2025 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀՄՇՁԲ-25/2-1 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՍՏՈՐԻՆ ՀՐԱԶԴԱՆԻ ՋՐԱՆՑՔԻ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Ստորին Հրազդանի ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքներ	համաձայնագրի կնքման օր	01 ապրիլի 2025 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
հ/հ 2479000059160000
ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

---------- Ա. ԱԲԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԳԱԲՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Զրվեժ բանավան 12 շ. 12
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2472404097110000
ՀՎՀՀ 01055212
Տնօրեն

---------- Հ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
/ստորագրություն/

Կ.Տ

** Աշխատանքների կատարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է աշխատանքը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պայմանը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների գնման դեպքում:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ «Ավարտը» սյունակում կատարման ժամկետը սահմանվում է օրացուցային օրերով:*

Հավելված N 3
« 29 » հունվարի 2025 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀՄՇՁԲ-25/2-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45241180/513	հիդրոտեխնիկական կառույցների մաքրման և նորոգման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
h/h 2479000059160000
ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

---------- Ա. ԱԲԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԳԱԲՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Զրվեժ բանավան 12 շ. 12
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2472404097110000
ՀՎՀՀ 01055212
Տնօրեն

---------- Հ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 4
« 29 » հունվարի 2025 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-25/2-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 29 » հունվարի 2025 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀՄՇՁԲ-25/2-1 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն